

Հավելված  
ՀՀ կառավարության 2026 թվականի  
մայիսի 7-ի N 622 - Ա որոշման

Ց Ա Ն Կ

ԳԵՐԱԿԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՈՒ ՀԱՄԱԼՐՈՂ ՄԱՍԵՐԻ, ՀՈՒՄՔԻ ԵՎ (ԿԱՄ) ՆՅՈՒԹԵՐԻ

NN ը/կ	ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափի միա- վորը	Քանակը	Ծագման երկիրը	Արտահանման երկիրը	Արժեքը (դրամ)	Այլ տեղեկու- թյուններ
<b>ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՈՒ ՀԱՄԱԼՐՈՂ ՄԱՍԵՐ</b>									
1.	8702400009	Տրոլեյբուս	Արտադրություն՝ 2026 թվական, չշահագործված <b>Մակնիշ՝</b> YUTONG ZK6128BEVG <b>Անվտանգության ստանդարտներ՝</b> – բավարարում են ՀՀ-ում գործող ՄՄ հանձնաժողովի 09.12.2011 թ.-ի թիվ 877 որոշմամբ ընդունված տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջները: <b>Չափանիշներ՝</b> – տրոլեյբուսներ, որոնք կարող են աշխատել էլեկտրաէներգիայի ստացման երկու եղանակով՝	հատ	45	Չինաստան	Չինաստան	4 326 300 000	

		<p>հպակային ցանցից սնուցմամբ կամ կողեզրին ուժակուտակիչ մարտկոցից սնուցմամբ՝ ինքնավար ընթացքով:</p> <p><b>Գաբարիտային չափերը՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- երկարությունը՝ 12170 մմ;</li> <li>- լայնությունը՝ 2550 մմ;</li> <li>- բարձրությունը՝ 3740 մմ (ներառյալ օդորակիչի և լծակաձև հոսանքընդունիչի բարձրությունները);</li> <li>- անվային բազան՝ 6000 մմ;</li> <li>- շրջադարձի անկյունագիծը՝ 20,5 մ:</li> </ul> <p><b>Զանգվածը՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- առավելագույն համախառն զանգվածը՝ 19500 կգ-ից ոչ ավելի;</li> <li>- լիցքավորված՝ 13500 կգ-ից ոչ ավելի:</li> </ul> <p><b>Տարողությունը՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- առավելագույն տարողությունը՝ 85 մարդուց ոչ պակաս;</li> <li>25+3 փափուկ ուղևորային նստարաններ;</li> <li>- հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար հարմարեցված:</li> </ul> <p><b>Բնութագիր՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- առավելագույն հաղթահարելի վերելքը՝ առնվազն 17%;</li> <li>- առավելագույն արագությունը՝ հպակային ցանցից դուրս 60 կմ/ժ (լրիվ ծանրաբեռնվածությամբ);</li> </ul>					
--	--	---	--	--	--	--	--

		<p>– արտաքին աղմուկի մակարդակը՝ 77 դԲ (Ա)-ից ոչ ավելի, ասֆալտապատ ճանապարհով 50 կմ/ժ արագությամբ ընթացքի ժամանակ:</p> <p><b>Շարժաբեր էլեկտրաշարժիչ՝</b></p> <p>– հզորությունը՝ 215 կՎտ, իսկ առավելագույնը՝ 350 կՎտ;</p> <p>– ՕԳԳ-ը՝ 97%;</p> <p>– շրջակա միջավայրի -40°C-ից մինչև 55 °C ջերմաստիճանների պայմաններում կանոնավոր աշխատելու հնարավորություն;</p> <p>– բարձր հուսալիություն և էներգիայի վերականգնման գործառույթ:</p> <p><b>Շարժաբեր էլեկտրահաղորդիչի կառավարման ինտեգրացված համակարգ՝</b></p> <p>– կատարում է էլեկտրաշարժիչի, դեկային կառավարման հիդրոմեդագուցիչի, օդային ճնշակի հսկիչի գործառույթներ՝ ապահովելով տեխնիկական սպասարկման հարմարավետություն:</p> <p><b>Հոսանքընդունիչ համակարգ՝</b></p> <p>– աշխատում է թեթև այլումինե համաձուլվածքից պատրաստված, մեկուսիչ ծածկույթով մետաղաձողային հոսանքընդունիչներով, որոնց տարբր եզրաչափերից պետք է լինի 680 մմ-ից ոչ ավելի:</p> <p>– Օգտագործվում է էլեկտրոնային կառավարմամբ օդանշակյան հոսանքիանիչ: Ցուցիչների վահանակի վրա տեղադրված է ձողային հոսանքընդունիչի կառավարման անջատիչ:</p> <p>– Համակարգն ունի գերլարումից և</p>					
--	--	---	--	--	--	--	--

			<p>կայծակից պաշտպանվելու համար նախատեսված սարքեր:</p> <p><b>Ուժակուտակիչ մարտկոց՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- օգտագործվում է լիթիում- երկաթ – ֆոսֆատային կուտակիչ;</li> <li>- կուտակիչ մարտկոցները ապահովում են տրոլեյբուսների ինքնավար ընթացքը (60 կմ) հպակային ցանցից դուրս;</li> <li>- մարտկոցի արկղի կափարիչը պատրաստված է կոմպոզիցիոն նյութից, որը այրման 1200°C ջերմաստիճանի դեպքում կդիմանա առնվազն 2 ժամ;</li> <li>- կուտակիչ մարտկոցն ունի կառավարման BMS համակարգ, որն իրականացնում է մարտկոցի ջերմաստիճանի կարգավորման, լիցքավորման վիճակի գնահատման, անսարքությունների վերլուծության և անվտանգ լիցքավորման կառավարման գործառույթներ;</li> <li>- ունի մշտադիտարկման համակարգ;</li> <li>- մարտկոցների ջերմային կառավարման համար առկա է հեղուկ սառեցման և հեղուկ տաքացման համակարգ՝ տրոլեյբուսի անվտանգությունը բարձրացնելու նպատակով:</li> </ul> <p><b>Էլեկտրական օդային ճնշակ՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- ունի լարման ավտոմատ նույնականացման գործառույթ: Առկա է հակավթարային պաշտպանություն, իսկ գերտաքացման, գերհոսքի, գերլարման, ցածր լարման և ֆազի</li> </ul>					
--	--	--	--	--	--	--	--	--

			<p>ընդհատման դեպքերում ապահովում է էլեկտրաշարժիչի համակարգի ժամանակին ավտոմատ անջատումը:</p> <p><b>Ղեկային կառավարում՝</b></p> <p>– ունի ղեկային կառավարման հիդրավլիկ ուժեղացուցիչ:</p> <p><b>Անիվներ և դողեր՝</b></p> <p>– օդաճնշական 305/70R 22.5 անխուց անվադողեր, այլումինե համաձուլվածքից անվահեծ:</p> <p><b>Ապակիներ՝</b></p> <p>– դիմապակին ամբողջական է, եռաշերտ, դիմացկուն: Ընթացքի ժամանակ ծանր առարկայի հարվածից չի կոտրվում և վնասում վարորդին: Կոտրված ապակու միջով տեսանելի է մոտակա տարածությունը և հնարավոր է վարել տրոլեյբուսը՝ պահպանելով վարման անվտանգությունը: Կողային ապակիներն ունեն 50% թողունակություն:</p> <p><b>Տաքացման և սառեցման համակարգ՝</b></p> <p>– տրոլեյբուսը կահավորված է տաքացման և սառեցման օդորակիչներով, օդային գոխիչներով;</p> <p>– ուղևորասրահը և վարորդի խցիկը ձմեռվա ամիսներին տաքացվում են էլեկտրական ռադիատորներով:</p> <p><b>Տեսահսկման համակարգ՝</b></p>					
--	--	--	---	--	--	--	--	--

			<p>– համակարգը ներառում է տեսախցիկներ, որոնք հնարավորություն ունեն տեսահսկել դռները, հետնամուտքը, ձողային հոսանքհանիչը, ուղևորասրահը: Գրանցումները պահպանվում են կոշտ սկավառակի վրա:</p>						
	ԸՆԴԱՄԵՆԸ								4 326 300 000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ